

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2024

Մարտի երկրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարտի երկրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում բարձր է եղել նորմայից 1-2 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են մարտի 15-ին. Տավուշում գրանցվել է +13…+16^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +10…+12^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +19…+21^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +17…+20^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +12…+15^{0}C, Շիրակում՝ +6…+8^{0}C (Արթիկ՝ +13^{0}C, Գյումրի՝ +14^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +9…+12^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +15…+17^{0}C, Գեղարքունիքում՝ +9…+13^{0}C, Լոռիում՝ +13…+15^{0}C, Արմավիրում, Արարատում՝ +19…+21^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +9…+11^{0}C, նախալեռներում՝ +13…+15^{0}C (Աշտարակ՝ +19^{0}C):

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 11-13-ն ընկած ժամանակահատվածում. Տավուշում գրանցվել է 0…-1^{0}C (Դիլիջան՝ -7^{0}C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ -8…-10^{0}C, նախալեռնային շրջաններում՝ -1…-3^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ 0…3^{0}C, նախալեռնային շրջաններում -3…-7^{0}C, Շիրակում՝ -8…-11^{0}C (Աշոցք՝ -17^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում -5…-9^{0}C (Հանքավան՝ -13^{0}C), նախալեռնային շրջաններում՝ -3…-5^{0}C, Գեղարքունիքում՝ -5…-9^{0}C, Լոռիում՝ -5…-8^{0}C (Տաշիր՝ -11^{0}C), Արմավիրում, Արարատում՝ -1…-3^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ -8…-10^{0}C, նախալեռներում՝ -1…-3^{0}C:



Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 15-25մմ (110-224%), Լոռիում՝ 21-31մմ (128-229%), Տավուշում՝ 32-15մմ (195-279%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 19-31մմ (110-145%), նախալեռներում՝ 21-39մմ (198-326%), Գեղարքունիքում՝ 27-73մմ (250-522%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 41-59մմ (229-297%), նախալեռներում՝ 44մմ (293%), Արմավիրում՝ 32-45մմ (427-439%), Արարատում՝ 39-49մմ (338-505%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 50մմ (176%), նախալեռներում՝ 54մմ (492%), Սյունիքի հովտային շրջաններում՝ 19-35մմ (150-154%), նախալեռներում՝ 23-26մմ (85-211%):

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են մարտի 11-13-ն ընկած ժամանակահատվածում. լեռնային շրջաններում՝ -8...-10^{0}C, առանձին լեռնային շրջաններում՝ ...-17...-19^{0}C, Արարատյան դաշտում, Վայոց ձորի նախալեռներում և Սյունիքի հովտային շրջաններում՝ -5....-7^{0}C:



Մարտի 20-ի դրությամբ ձյան ծածկի բարձրությունն Արագած բ/լ-ում կազմել է 156 սմ, Ամբերդում՝ 75սմ, Ջերմուկում՝ 85սմ, Հրազդանում, Անանուն լ/ք՝ 71սմ, Ապարանի ջրամբարում 61սմ, Մարտունիում 58սմ, Հրազդանում 56սմ, Ճամբարակում 50սմ, Սևանում 46սմ, Սեմյոնովկայում 45սմ, Գավառում 36սմ, Պուշկինի լ/ք-ում 30սմ, Ամասիայում 21, Ֆանտանում 16սմ, Ստեփանավանում, Աշոցքում, Դիլիջանում, Օձունում, Վանաձորում, Տաշիրում, Գյումրիում, Արթիկում, Գորիսում, Սիսիանում, 1-10սմ, մնացած շրջաններում ձյան ծածկը բացակայել է:

Գյուղատնտեսական աշխատանքների կատարման պայմանները

Հովտային և առանձին նախալեռնային շրջաններում դաշտերում և այգիներում կատարվել է ծառերի բների փխրեցման և սպիտակեցման աշխատանքներ:

Տասնօրյակի ընթացքում դիտված տեղումները բարձրացրել են հողի խոնավության պաշարները, սակայն դժվարեցրել դաշտային աշխատանքների կատարումը:

Աշնանացան ցորեն

Հովտային շրջաններում շարունակվել է աշնանացան հանգույցների առաջացումը, նախալեռնային շրջաններում աշնանացանը գտնվել է թփակալման և ցողունակալման փուլերում:

Բույսի բարձրությունը տասնօրյակի վերջում կազմել է 12-15սմ, տասնօրյակային աճը կազմել է 3-6սմ:

Մերձավանում աշնանացանի դաշտում բույսի աճի և զարգացման համար անհրաժեշտ հողի խոնավության պաշարները 0-20սմ շերտում՝ 24մմ, 0-30սմ՝ 41մմ:

Լեռնային շրջաններում աշնանացան ցորենը դեռ գտնվել է ձմեռային հանգստի շրջանում:

Առանձին լեռնային շրջաններում հողը սառած էր 18-20սմ խորությամբ:

Աշնանացանի ձմեռման համար վտանգավոր ջերմաստիճաններ չեն գրանցվել:

ցորենի ծեղացողունի ներքին

Պտղատուներ

Արարատյան դաշտում բազմամայա միջին ժամկետներից 20-25 օր շուտ դիտվել է ծիրանենու մասսայական ծաղկում, դեղձենու բողբոջներն ուռչել են, տեղ-տեղ՝ բացվել:

Խոտաբույսեր

Հովտային շրջաններում շարունակվել է առվույտի ցողունի աճը:

Բույսի բարձրությունը տասնօրյակի վերջում հասել է 13սմ-ի: Տասնօրյակային աճը կազմել է 4-7սմ: